

Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի շնորհավորական ուղերձը ասորական ազգային տոնի՝ Յաբ-Նիսանի կապակցությամբ

01.04.2015



Սրտանց շնորհավորում եմ մարզաբնակ ասորիներին Նոր տարվա՝ Յաբ-Նիսանի կապակցությամբ: Թող այս բնության զարթոնք և պտղաբերություն խորհրդանշող տոնը երջանկությամբ ու սիրով լցնի Ձեր օջախները:

Ճակատագրով և պատմությամբ նմանություն ունեցող հայ և ասորի ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը հազարամյակների պատմություն ունի: Աշխարհասփյուռ ասորիների մի հատվածը, որն այսօր ապրում է մեր կողքին, շարունակում է ամրանալ՝ զարգացնելով իր բազմադարյա մշակույթն ու գրականությունը:

Միանալով մեր ասորի բարեկամների ուրախությանը, մաղթում եմ բարեկեցություն, հաջողություններ և ամենայն բարիք:

Արարատի մարզպետ

Ռ.Աբրահամյան